«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անգլերենի դասավանդման ժամանակ ուսումնառության սովորողների մոտիվացիայի բարձրացումը տարրական ծրագրում

Առարկա՝ *Անգլերեն*

Ուսուցիչ՝ Գոհար Ամատունի

Դպրոց՝ Ն. Չարյանի անվան թիվ 130 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Անուշ Խաչիկյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....7

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ.....8

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓՈՐՁ ՈՒՂՂՎԱԾ ՏԱՐՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ……10

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՀԱՎԵԼՎԱԾ 1.....18

ՀԱՎԵԼՎԱԾ 2.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ խոսում ենք ժամանակակից կրթության մասին չենք կարող այն խնդիրները, որոնք պարբերաբար ծագում են կրթական գործընթացքի ընթացքում: Առավել հաճախ հանդիպող և անհանգստացնող խնդիրներից է սովորողների մոտիվացիայի բացակայությունը: Մոտիվացիայի բացակայության խնդիրը համընդհանուր է, սակայն հատկապես սուր է արտահայտված օտար լեզուներ սովորելու գործընթացում: Հետքարքրիրն այն է, որ մինչ օտար լեզու սովորելու պահը և հենց սկզբում սովորողներն ունեն բարձր մոտիվացիա: Նրանք ցանկանում են սովորել նոր բառեր, արտասանել բանաստեղծություններ և երգեր երգել օտար լեզվով: Մոտիվացիայի նվազման խնդիրն ի հայտ է գալիս մի փոքր ավելի ուշ, որպես կանոն, երբ սովորողները բախվում են դժվարությունների հաղթահարմանը. ուսումնասիրվող նյութի ծավալն ու բարդությունը մեծանում է, աշակերտը պետք է ջանքեր գործադրի այն յուրացնելու համար: Արդյունքում շահագրգռվածությունը նվազում է, օտար լեզվին տիրապետելու կամքը թուլանում է, ընդհանուր կատարողականությունը իջնում է, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում մոտիվացիայի վրա: Այս փուլում շատ աշակերտների համար ներքին մոտիվացիան դեռ բավականաչափ ձևավորված չէ, ուստի ուսուցչի խնդիրն է օգնել աշակերտին պահպանել և զարգացնել հետաքրքրությունն օտար լեզվի ուսումնառության նկատմամբ:

Այսպիսով, ուսուցչի առջև դրված է խնդիր՝ խթանել աշակերտների մոտիվացիան: Նոր չափորոշիչներին անցնելու համատեքստում սովորողներն իրենք պետք է հետաքրքրված լինեն իրենց ուսուցմամբ և զարգացմամբ: Մոտիվացիան մարդկային ցանկացած գործունեության «ձգանն» է: Իրականում գոյություն չունեն սովորելու մոտիվացիա չունեցող աշակերտներ, պարզապես կան դեմոտիվացված սովորողներ: Ցանկացած ճանաչողական գործունեություն՝ գործառնական բաղադրիչների հետ միասին (*գիտելիքներ, հմտություններ*) ներառում է մոտիվացիա (*մոտիվացիա, հետաքրքրություն, վերաբերմունք*):

Խնդրի արդիականությունը պայմանավորված է օտար լեզվի դասավանդման միջոցները համալրելու ուղիների որոնմամբ:

Հետազոտության հիմնական խնդիրն այն է, որ չնայած այն հանգամանքին, որ մոտիվացիայի նշանակությունն օտար լեզու սովորելու հարցում մեծանում է, մանկավարժական պրակտիկան ցույց է տալիս, որ անգլերեն սովորելու մոտիվացիան նվազում է և բավարար չէ լավ արդյունքներ ստանալու համար:

Հետազոտության առարկա՝ մեթոդների և հնարների կիրառում, որոնք խթանում են տարրական դպրոցին աշակերտների անգլերենի ուսումնառության մոտիվացիայի բարձրացմանը:

Ուսումնասիրության նպատակը՝ բացահայտել տարրական դպրոցի աշակերտների կողմից անգլերեն սովորելու մոտիվացիայի բարձրացման ամենաարդյունավետ մեթոդները և հնարները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ի՞նչ է մոտիվացիա:

Շարժառիթ, ներքին և արտաքին գործոններ, որոնք դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին:

Պատմության ընթացքում հոգեբաններն առաջարկել են տարբեր տեսություններ՝ բացատրելու, թե ինչն է դրդում և ձևավորում մարդու վարքագծը:

Մոտիվացիայի *բնազդային տեսությունը* ենթադրում է, որ վարքագիծը դրդվում է բնազդներով (Ուիլյամ Ջեյմս, Զիգմունդ Ֆրեյդ և Ուիլյամ Մաքդուգալ): Դրանք ներառում են կենսաբանական բնազդներ, որոնք կարևոր են օրգանիզմի գոյատևման համար, ինչպիսիք են վախն ու սերը:

Կարիքների հիերարխիան մեկ այլ մոտիվացիայի տեսություն է (Աբրահամ Մասլոուի պահանջմունքների բուրգ), որը հիմնված է հիմնական ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարելու ցանկության վրա: Որպես հումանիստ Մասլոուն հավատում էր, որ մարդիկ ինքնաիրականացման բնածին ցանկություն ունեն, այսինքն՝ լինել այն ամենը, ինչ կարող են լինել: Այս վերջնական նպատակին հասնելու համար, սակայն, պետք է բավարարվեն մի շարք ավելի հիմնարար կարիքներ ինչպիսիք են՝ սննդի, անվտանգության, սիրո և ինքնագնահատականի պահանջմունքները:

Ճանաչողական մոտիվացիան ներքին գործողության ազդակ է, որն օգնում է մեզ ավարտին հասցնել այն, ինչ սկսել ենք: Այն գտնվում է գրեթե ցանկացած գործողության հիմքում, խթանում և ուղղորդում է այդ գործողությունը: (Зайцева М.В.Мотивация и некоторые пути её повышения. М., ИД «Первое сентября», 2003, էջ23)

Հոգեբաններն առաջարկել են մոտիվացիայի բազմաթիվ տարբեր տեսություններ: Իրականությունն այն է, որ կան բազմաթիվ տարբեր ուժեր, որոնք առաջնորդում և ուղղորդում են մեր շարժառիթները: Մոտիվացիան լեզվի ուսուցման «անտեսված սիրտն» է, - ասում է Մայքլ Ռոստը՝ WorldView ուսանողական գրքերի շարքի խմբագիրը: «Մենք՝ ուսուցիչներս, հաճախ մոռանում ենք, որ մեր դասավանդման բոլոր հնարները զտվում և ներ են թափանցում մեր աշակերտների մոտիվացիայի միջոցով»:

Այնուամենայնիվ, հետազոտությունները հաստատում են մոտիվացիայի արժեքը: Մոտիվացիան ազդեցություն ունի սովորողի թե՛ գործադրած ջանքերի և թե՛

վերջնարդյունքի վրա և, ի վերջո, սովորողի կարողությունների վրա: Ձևավորելով մեր աշակերտների մոտիվացիան՝ մենք կարող եք օգնել սովորողներին դառնալ ավելի հմուտ անգլերենում և անընդհատ սնել նրանց սովորելու ցանկությունը:

Արտաքին դրդապատճառները կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

- Դրական դրդապատճառները պայմանավորված են իրենց ծնողների հանդեպ պարտքի զգացումով, սովորելու գաղափարներով՝ որպես մշակույթի մեծ արժեքներին տիրապետելու, կրթություն ստանալու ճանապարհ:
- Բացասական դրդապատճառներն առաջանում են սպառնալիքից, պատիժից, նկատողությունից, քննադատությունից և առհասարակ վատ գնահատականից:

Ներքին մոտիվացիայի հիմքում ընկած է գիտելիքի ու նորը իմանալու անզուսպ ցանկությունը: Նման մոտիվացիայով աշակերտը հեշտությամբ է հաղթահարում ուսման ընթացքում հանդիպած դժվարությունները:

Ողջամիտ ժամկետում իրագործելի նպատակներ դնելը նույնպես նպաստում է մոտիվացիայի շոշափելի բարձրացմանը:

Սովորելու հանդեպ մոտիվացիան կախված է մի շարք գործոններից.

- սովորողի առանձնահատկություններից (սեռ, մտավոր զարգացվածություն, ընտանեկան կարգավիճակ և այլն).
- ուսուցչի կոմպետենտ լինելուց և իր իսկ վերաբերմունքից մանկավարժական գործունեությանը (սովորողների հետ հարաբերություններ կառուցելու և համագործակցելու կարողություն).
- մանկավարժական գործընթացի կազմակերպումից.
- ուսումնական ծրագրի առանձնահատկություններից (նյութի բովանդակության պատշաճ ընտրություն):

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անգլերենի դասավանդման առջև դրված նպատակները պետք է լուծի մեթոդապես իրավասու, կոմպետենտ ուսուցիչը, ով տիրապետում է օտար լեզվի դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներին, ով գիտի տարրական դպրոցական տարիքի աշակերտների հոգեբանական և մանկավարժական

առանձնահատկությունները: Այս տարիքում առարկայի հանդեպ սերը շատ սերտորեն կապված է հոգեբանական հարմարավետության, ուրախության, շփման կարիքի և պատրաստակամության զգացողությունների հետ, որոնք ուսուցիչը ստեղծում է դասարանում:

Անգլերեն սովորելու հաջող մեկնարկը կարող է նպաստել նաև այլ օտար լեզուներ սովորելու բարձր մոտիվացիայի ստեղծմանը: Դասավանդման հաջողությունը և ուսանողների վերաբերմունքն առարկայի նկատմամբ մեծապես կախված է նրանից, թե ուսուցիչը որքան հետաքրքիր և զգացմունքային է վարում դասը:

Անգլերենի դասաժամն ունի իր առանձնահատկությունները, քանի որ, ի տարբերություն այլ առարկաների, որպես ուսուցման հիմնական նպատակ առաջ է քաշվում սովորողների հաղորդակցական ունակությունների ձևավորումը: Ներկայումս օտար լեզվի յուրացման գլոբալ նպատակն է՝ տարբեր մշակույթներին ծանոթանալը: Այս հմտությունը ձեռք է բերվում միջմշակութային հաղորդակցության ունակության ձևավորման միջոցով: Ուսուցումն հիմնականում կազմակերպվում է հաղորդակցական բնույթի առաջադրանքների հիման վրա, որն էլ հանդիսանում է օտար լեզվի դասի տարբերակիչ առանձնահատկությունը: Հետևաբար աշակերտները պետք է սովորեն հասկանալ օտար խոսքը՝ լսելով, արտահայտել իրենց մտքերն անգլերենով՝ բանավոր խոսքում, կարողանալ գրավոր արտահայտել իրենց մտքերը՝ գրավոր խոսքում, հասկանալ կարդացած տեքստը: Խոսքի գործունեության թվարկված տեսակներից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է կուտակել լեզվական միջոցներ, որոնք կարող են ապահովել յուրաքանչյուր գործունեություն տարրական հաղորդակցական մակարդակում:

Ուսուցման սկզբնական փուլը խիստ կարևոր է, քանի որ հետագա փուլերում առարկայի յուրացման հաջողությունը կախված է այն հանգամանքից, թե ինչպես է ընթացել ուսուցումն առաջին փուլը: Չի կարելի չհամաձայնել անգլիացի մեթոդիստ Գ.Պալմերի հետ, ով մեծ նշանակություն է տվել օտար լեզվի ուսումնասիրության սկզբնական փուլերին, ասելով. "Take care of the first two stages and the rest will take care of itself":

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս, որ օտար լեզուների դասերը զարգացնում են, առաջին հերթին, երեխաների տրամաբանական և քննադատական մտածողությունը, ստեղծագործական միտքը, բարձրացնում նրանց կրթական և մշակութային մակարդակը: Օտար լեզու սովորելը նաև դրական է անդրադառնում մայրենի լեզվի իմացության վրա:

Հոգեբանները տարբեր կերպ են մեկնաբանում օտար լեզու սովորելու բարենպաստ շրջանը, բայց ամենից հաճախ դրանք համընկնում են 4-12 տարեկան ժամանակահատվածի հետ. 12 տարեկանից հետո երեխան պետք է հաղթահարի բազմաթիվ լրացուցիչ լեզվական խոչընդոտներ: Երեխայի ուղեղը լեզվի յուրացման բացառիկ ունակություն ունի, սակայն տարիքի հետ դա նվազում է: Այս տարիքում օտարալեզու նյութի անգիր անելու արագությունը բացատրվում է ինչպես երկարաժամկետ հիշողության մեխանիզմների գերակշռությամբ, այնպես էլ իմպրինտինգի (տպավորում - imprinting) մեխանիզմի առկայությամբ՝ անհրաժեշտ խթանի և մոտիվացիայի առկայության դեպքում օբյեկտների հատկություններն ընկալելու և առմիշտ մտապահելու ունակությունն է: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ հենց լեզվի դասերն են նպաստում հիշողության կարողության աստիճանական բարձրացմանը: Ներկայումս կարելի է ապացուցված համարել, որ երեխաների կողմից լեզվական նյութի յուրացման թվացյալ դյուրինության հետևում, նույնիսկ բնական միջավայրում, թաքնված են բարդ գործընթացներ, որոնք կառուցված են ոչ թե իմիտացիայի, այլ ընդհանրացման վրա, թեև իրականացվում է ներքուստ անգիտակից վիճակում:

Իհարկե, երեխան ավելի հեշտ է տիրապետում երկրորդ լեզվին, քան մեծահասակը, սակայն միայն իր համար կենսական նշանակություն ունեցող հաղորդակցության պայմաններում և միջավայրում, որի աղբյուրը տվյալ տարիքի համար կարող է լինել ***ուսուցողական խաղը***: Երեխաները մինչև 10-12 տարեկանը շարունակում են խաղալ: Նրանց համար խաղը միշտ առաջին տեղում է: Հենվելով խաղի վրա՝ հնարավոր է նույնիսկ ամենապարզ արտահայտություններն ավելի հետաքրքիր ու էմոցիոնալ դարձնել՝ խթանելով օտար լեզվով խոսելու բնական

ցանկությունը: Օտար լեզու սովորելու ընթացքում խաղը չի հակադրվում ուսուցման գործընթացին, այլ անքակտելիորեն կապված է նրա հետ: Այս ֆունկցիայում խաղը թույլ չի տալիս ազատ գործողություն, որը հատուկ է սովորական խաղերին: Սովորողին ներքաշելով այս կամ այն խաղի մեջ՝ ուսուցիչը պետք է հաշվի առնի տվյալ պահին երեխային ուրախացնող կամ հուզող հանգամանքը՝ չմոռանալով խաղի նպատակի մասին: Ուսուցիչն է ղեկավարում խաղի ընթացքը և վերահսկում այն:
Երեխաներին խաղի միջոցով սովորեցնելը նպաստում է նրան, որ խաղից ստացած հաճույքն աստիճանաբար փոխանցվում է ուսուցման գործընթացին: Ուսուցումը պետք է լինի ուրախ: Միևնույն ժամանակ խաղը ոչ միայն մանկական ուրախության աղբյուր է, այլև ուսումնական խնդիրներ լուծելու հիմնական հնար: Նոր խաղի հանդեպ հետաքրքրությունը երեխաներին անգլերեն սովորելու իրական ներքին մոտիվացիա է տալիս: Երեխաների մոտ անգլերեն լեզվի հանդեպ հետաքրքրություն արթնացնելու համար ուսուցիչը պետք է այնպես վարի դասը, որ երեխան սովորելիս ստանա նույն հաճույքը, ինչ ստանում է խաղից: Որքան հետաքրքիր են դասերը, որքան ուսուցիչը տեղին է կիրառում խաղի տեխնիկանները, վիզուալիզացիան, այնքան հեշտ է նոր նյութը յուրացվում:

Պետք է հաշվի առնել երեխաների տարիքային ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները: Նախատեսել այնպիսի աշխատանք, որը կթեթևացնի լարվածությունն ու հոգնածությունը: Երեխաներին հետաքրքրելու համար անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի ուսումնական գործընթաց, որը կառաջացնի բարձր մոտիվացիա և կապահովի նրանց ակտիվությունը դասին: Խաղի իրականացման իրական նպատակն է լեզվական նյութը սովորողներին մատուցել այնպես աննկատ և դյուրին՝ խաղային ձևով, որ իրենք չնկատեն սովորելու գործընթացը: Երեխայի համար խաղը հետաքրքրաշարժ շփում է ուսուցչի և հասակակիցների հետ: Կարևոր է, որ երեխաները լինեն ազատ, ուսուցչի հետ միասին նրանք «ստեղծեն» դասը, երեխաների պատրաստակամությունն ու ցանկությունը՝ մասնակցելու մի հաղորդակցության, որը օտար լեզվով է՝ անգլերենով: Հենց թվարկված մեթոդներն ու տեխնիկան են նպաստում կրտսեր դպրոցական տարիքում ճանաչողական ներքին մոտիվացիայի զարգացմանը, հենց այս տարիքն է նպաստավոր ճանաչողական մոտիվացիայի զարգացման համար:

Քերականական խաղերը բնականաբար կարթնացնեն սովորողների հետաքրքրասիրությունը: Խաղի գրավիչ կողմերից մեկը երեխաների համար՝

տեղաշարժվելու հնարավորությունն է, որն էլ իր հերթին խթան է հանդիսնում մտավոր կարողությունների ակտիվացմանը և նոր գիտելիքի տպավորիչ և հիշողության մեջ երկարատև մնայուն լինելու փաստը:

Խաղը դասի ընթացքում գործում է որպես գիտելիքների համախմբման մեթոդ և ուսուցման միջոց: Խաղը մի կազմակերպված գործունեություն է, որը պահանջում է սովորողի հուզական և մտավոր ուժի լարում: Խաղում սովորողը ստիպված է որոշումներ կայացնել՝ ի՞նչ անել, ի՞նչ ասել, ինչպե՞ս հաղթել: Այս հարցերը լուծելու ցանկությունը սրում է խաղացողների մտավոր ակտիվությունը: Եվ եթե աշակերտը միաժամանակ խոսում է օտար լեզվով, ապա սա հնարավորություններ է տալիս զարգացնել սովորողի լեզվական հմտությունները:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ՓՈՐՁ ՈՒՂՂՎԱԾ ՏԱՐՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Հետազոտական փորձի ընթացքում ուսուցողական խաղը կդիտարկվի որպես հնար՝ նոր նյութը ավելի դյուրին մատուցելու և սովորողների կողմից ավելի արագ ընկալելու միջոց: Փորձի ընթացքում խաղը նաև կհանդիսանա համագործակցման միջոց: Նպատակն է բարձրացնել կրտսեր տարիքի աշակերտների մոտիվացիան անգլերենի ուսումնառության նկատմամբ:

Նպատակն է իրականացնել համեմատական վերլուծություն ավանդական և ժամանակակից մեթոդներով (ուսուցողական խաղի միջոցով) անցկացված դասերի արդյունքների միջև՝ շեշտադրելով աշակերտների մոտիվացիայի բարձրացումը:

Առաջ է քաշվել այն գաղափարը, որ ժամանակակից դասավանդման մեթոդների և մանկավարժական հնարների կիրառումը զգալի առավելություն ունի ավանդական դասավանդման մեթոդիկաների հետ համեմատած: Դիդակտիկ նյութերը, տեսադա-սերը, պրեզենտացիաները և ուսուցողական խաղերը նպաստում են աշակերտների հետաքրքրվքծության և մոտիվացիայի բարցրացմանը:

Առաջին փուլում նախապատրաստվել էր երկու դասի պլան՝ խաղերի կիրառմամբ և առանց: Այս փուլը ներառում էր նաև այն խաղերի ընտրությունը, որոնք համապատասխանում են տվյալ քերականական կանոնին և սովորողների տարիքային առանձնահատկություններին:

Բացի այդ, մշակվել է հետևյալ աշխատանքային պլանը.

I Փուլ. ա/Դասի անցկացում՝ նոր քերականական նյութի ներմուծում առանց խաղերի.

բ/Ինքնուրույն գրավոր աշխատանք. (Թելադրություն)

II Փուլ. ա/Դասերի կազմակերպում՝ նոր քերականական նյութի ներմուծում խաղերի միջոցով.

բ/Ինքնուրույն գրավոր աշխատանք.

III Փուլ. Աշակերտների հետադարձ կապը երկու դասերի վերաբերյալ (հարցա-թերթիկի լրացում)

IV Փուլ. Արդյունքների մշակում:

Այսպիսով, հետազոտությունն իրականացվել է Ն.Զարյանի անվան թիվ 130 հիմնական դպրոցի երկու զուգահեռ 4-րդ դասարանի աշակերտների հետ՝ տարբեր քերականական կանոնների բացատրության գործընթացով: Հետազոտության նպատակն էր պարզել խաղերի ազդեցությունը տարրական դպրոցի աշակերտների անգլերենի քերականական հմտությունների ձևավորման վրա: Ուսումնասիրությունն անցկացվել է երկու դասարանների մեկական խմբերի հետ, քանի որ դասարանները բաժանվում են երկու խմբի: Յուրաքանչյուր խմբում սովորողների թիվը 15–18 հոգի է: Հետազոտությունը կատարվել է դպրոցական միջավայրում՝ աշակերտների սովորական դասարանային պայմաններում: Դասարանի աշակերտների կարողությունները միջին են, բոլոր երեխաները շարժուն են, եռանդուն և զգացմունքային: Երեխաների մեծ մասը սովորելու ցանկություն ունեն: Երեխաները աշխատել են խմբային և անհատական ձևաչափով: Ընդհանուր առմամբ, դասերը պահանջում են աշխատանքի բարձր տեմպ:

IV ա դասարան

Աշակերտների քանակը 19 են՝ 12 աղջիկ և 7 տղա: Դասի թեման էր Special Questions/ Wh-questions (Հատուկ հարցեր): Նպատակն էր սովորողների մոտ զարգացնել հատուկ հարցեր կազմելու հմտությունը: Արդյունքում աշակերտները պետք է պատմողական նախադասության յուրաքանչյուր անդամին կարողանային տալ հատուկ հարց՝ օգտագործելով հարցական դերանունները:

Առաջին դասաժամն անցկացվեց ավանդական դասավանդման եղանակով: Դասաժամն անցել է հիմնականում ըստ դասապլանի՝ կիրառելով դասագիրքը, սովորողներին տրվել է հարցական դերանունների ցանկը, որը գրել են բառատետրում: Նաև բացատրվել է հատուկ հարցերի շարադասությունը և գրատախտակին գրվել է մի քանի օրինակ: Դիտարկելիս նկատելի էր աշակերտների տարակուսանքը, քանի որ նոր նյութը դժվար էր յուրացման համար, որոշ աշակերտներ հուսահատվել էին և նկատելի էր հետաքրքրության անկում՝ քերականական կանոնը թվում էր անհաղթահարելի և անըմբռնելի:

Հաջորդ օրը սովորողներին բաժավեց ինքնուրույն գրավոր աշխատանքի թերթիկներ, նմանատիպ առաջադրանքով.

Օր.՝ My grandmother gives us cookies every morning.

Does _____?

What does _____?

Աշակերտների 80% դժվարանում էր կատարել առաջադրանքը, և սովորողների 65%-ի գրավոր աշխատանքները գնահատվեցին անբավարար:

Այդ իսկ օրը երեխաներին առաջարկեցի խաղալ մի խաղ, որը հետագայում անվանեցինք A Special Train: Դասարանը բաժանվեց երկու խմբի: Գրատախտակին գրեցինք մի նախադասություն, այնուհետև սեղանին դրված թերթիկներից երեխաները ընտրում էին բառեր և գնացքի վագոնների պես կանգնելով՝ մեկը մյուսի կողքին, կառուցում էին հարցական նախադասությունը: Գնացքը կարող էր շարժվել միայն մեկ պայմանի կատարման դեպքում, եթե հարցական նախադասության բոլոր անդամներն իրենց ճիշտ տեղերում հայտնվեին:

Այս դասաժամին անցավ աննկատ, գրեթե մեկ ակնթարթում: Աշակերտները ոգևորված էին, ամբողջ դասարանով մեկ տարածվել էր մրցակցային ոգին աղմուկի հետ միախառնված: Դասի վերջում գրեթե բոլոր աշակերտները հիանալի կերպով հիշում էին հատուկ հարցի շարադասությունը: Դասը միանշանակ ծառայեց իր նպատակին և ուսուցողական խաղը տվյալ դեպքում հիանալի միջոց էր:

Երկրորդ դասի վերջում աշակերտներին բաժանվեցին հարցաթերթիկներ՝ հետադարձ կապի համար, հետևյալ հինգ հարցերով.

1. Քեզ դու՞ր են գալիս անգլերենի դասերը:

ա/ այո բ/ ոչ

2. Անգլերենի դասերը քեզ համար հետաքրքի՞ր են անցնում, թե ձանձրալի:

ա/ հետաքրքիր բ/ ձանձրալի

3. Ամենից շատ ի՞նչին ես սպասու և սիրով անում դասերին:

_____

4. Ո՞ր անգլերենի դասը հավանեցիր

ա/ առանց խաղ բ/ խաղով

5. Դասի ո՞ր մասը կցանկանայիր, որ նորից կրկնվի հաջորդ դասերին:

_____

IV դասարան

Աշակերտների քանակը 15 են՝ 11 տղա և 4 աղջիկ: Դասի թեման էր The Past Simple Tense/ Irregular Verbs (Անցյալ անորոշ ժամանակաձև/ Անկանոն բայեր): Նպատակն էր սովորողների մոտ զարգացնել անցյալ ժամանակաձևով դրված նախադասության մեջ անկանոն բայերի կիրառելու հմտությունը: Արդյունքում աշակերտները պետք է տարբերակեին կանոնավոր և անկանոն բայերը՝ անկանոնները անգիր սովորելով:

Առաջին դասաժամն անցկացվեց ավանդական դասավանդման եղանակով: Այսինքն դասաժամն անցել է հիմնականում ըստ դասապլանի՝ կիրառելով դասագիրքը և սովորողներին տրվել է մի քանի անկանոն բայերի ցանկ: Աշակերտներին հանձնարարվել էր հաջորդ դասի համար պատրաստվել թելադրության: Աշակերտների զգալի հատվածի կողմից որևէ ոգևորություն չի նկատվել, աշակերտները պասիվ էին և չէին ցուցաբերում որևէ հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Դժկամությամբ ընդունվեց նաև անկանոն բայերի անգիր սովորելու փաստը:

Հաջորդ օրը սովորողները գրեցին թելադրություն, որի արդյունքները ցածր էին: Աշակերտները շատ անհանգիստ էին և անդադար փորձում էին արտագրել բառատետրից:

Երրորդ հետազոտական դասաժամը նույնպես ընթացել է հիմնականում ըստ դասապլանի, սակայն այս անգամ որպես հնար ընտրվել էր ուսուցողական խաղ “Present and Past Tenses Matching Game”–ը: Այս խաղը զվարճալի միջոց էր, որը օգնեց ամրապնդել բայերի ներկա և անցյալ ձևերը: Օգտագործվել էին քարտեր, որոնց վրա

գրված էին տարբեր բայերի անցյալ և ներկա ժամանակաձևերը, յուրաքանչյուր քարտի վրա մեկ բայ: Օրինակ՝ *jump* և *jumped*, *see* և *saw*, *play* և *played*, *run* և *ran*: Քարտերը խառնել և դրել էինք գլխարկի մեջ: Երեխաները մեկը մյուսի հետևից մոտենում և հանում էին քարտերը, բարձրաձայն կարդում յուրաքանչյուր բառը և դնում սեղանի վրա՝ ներկա ժամանակաձևով բայը սեղանի ձախ անկյունում, իսկ անցյալ ձևը՝ աջ անկյունում: Երբ գլխարկը դատարկ էր, աշակերտները բաժանվեցին երկու խմբի: Յուրաքանչյուր խմբից հերթով մոտենում էր մեկ աշակերտ սեղանի վրայի քարտերից գտնում էր մեկ բայական զույգ՝ ներկա և անցյալ ձևերը և գրատախտակի վրա՝ իրենց խմբին հատկացված մասում գրում այդ բայական զույգը: Որ խումբը ավելի շատ բայական զույգեր էր գտել՝ առանց ուղղագրական սխալների, այդ խումբն էլ հաղթեց:

Այսպիսով, դասարանում ստեղծվել էր ընդհանուր համագործակցային մթնոլորտ և առողջ մրցակցային պայմաններ խմբերի համար: Երրորդ դասի ընթացքում նկատվեց սովորողների զգալի ակտիվություն, ոգևորություն և ձգտում առավել շատ բայական ձևերի հայտնաբերում:

Երրորդ դասի վերջում այս դասարանի աշակերտներին նույնպես բաժանվեցին հարցաթերթիկներ՝ հետադարձ կապի համար, հետևյալ հարցերով.

1. Քեզ դու՞ր են գալիս անգլերենի դասերը:
   ա/ այո բ/ ոչ
2. Անգլերենի դասերը քեզ համար հետաքրքի՞ր են անցնում, թե ձանձրալի:
   ա/ հետաքրքիր բ/ ձանձրալի
3. Ամենից շատ ի՞նչին ես սպասու և սիրով անում դասերին:
   _____
4. Ո՞ր անգլերենի դասը հավանեցիր
   ա/ առանց խաղ բ/ խաղով
5. Դասի ո՞ր մասը կցանկանայիր, որ նորից կրկնվի հաջորդ դասերին:
   _____

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փորձի բոլոր փուլերն իրականացնելուց հետո մշակեցվեցին արդյունքները: Պետք էր եզրակացություն անել, թե փուլերից որն է նպաստել քերականական հմտության ավելի հաջող ձևավորմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անգլերեն նախադասության քերականորեն ճիշտ կառուցմանը՝ սխալների բացակայությանը կամ առկայությանը, բառերի ճիշտ դասավորությանը, հարցական նախադասության կառուցվածքի պահպանմանը, նաև ուշադրություն է դարձվել անկանոն բայերի ուղղագրությանը: Անհրաժեշտ էր պարզել, թե ուսումնասիրությունից հետո ինչ մակարդակի են հասել այս հմտությունները և համեմատել փորձերի արդյունքները:

Չափումն իրականացվել է երկու անգամ: Դիտարկման արդյունքում հնարավոր եղավ պարզել, որ երկրորդ փուլում երեխաները ավելի շատ էին հետաքրքրված աշխատանքով, ի տարբերություն առաջինի, որտեղ աշակերտները որոշ դժկամությամբ և դժվարությամբ գրեցին թելադրությունը և սկսեցին կատարել քերականական առաջադրանքները: Քերականական խաղերի կիրառումը նպաստեց հուզական միջավայրի ստեղծմանը: Դասի ողջ ընթացքում պահպանվել է լավ կարգապահություն, առողջ աղմուկ, աշակերտներն ակտիվորեն ներգրավվել էին գործունեության մեջ:

Արդյունքների ամփոփումից հետո պարզվեց, որ անգլերենի դասերին խաղերի կիրառումն արդյունավետ հնար է, հատկապես տարրական դպրոցի աշակերտների մոտ քերականական հմտությունների ձևավորման համար:

Հետադարձ կապի ժամանակ աշակերտների 100% իրենց հարցաթերթիկներում նշել էին, որ հաջորդ դասերին նույնպես կցանկանային խաղալ ուսուցողական խաղեր:

Տվյալների հավաքագրման հիմնական մեթոդներ են հանդիսացել՝ դիտարկումը, կատարված գրավոր աշխատանքները, աշակերտների անկետավորումը՝ հետաքրքրության մակարդակը պարզելու համար:

Հետազոտության ընթացքում իրականացվել է երկու/երեք փորձնական դասաժամ երկու դասարաններում, ընդ որում առաջինը՝ ավանդական մեթոդների կիրառմամբ, մյուսը՝ ներգրավելով դասավանդման ժամանակակից տեխնիկաներ, կիրառելով խաղեր, խմբային աշխատանքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքում դիտարկվել է անգլերենի դասավանդման մեթոդաբանության մեջ առկա կարևոր խնդիրներից մեկը՝ տարրական դպրոցի աշակերտների մոտ բարձր մոտիվացիայի ձևավորման խնդիրը:

Մոտիվացիան կարելի է ընդունել որպես անձի առանցք, որի շուրջ ձևավորվում են այնպիսի հատկություններ ինչպիսիք են արժեքային կողմնորոշումը, վերաբերմունքը, սոցիալական ակնկալիքները, հույզերը և անձի կամային հատկությունները:

Մոտիվացիան ուսուցման գործընթացում կարևոր դեր ունի, սակայն այն տեսանելի չէ և երբեմն էլ անչափելի է: Այն համակարգային է, և կարելի է բնութագրել իր ուղղորդվածությամբ, կայունությամբ և դինամիկայով: Ուսուցիչը, գիտակցելով մոտիվացիայի առաջատար դերը անգլերենի դասավանդման գործում, պետք է հստակ պատկերացնի դրա ձևավորման ուղիներն ու մեթոդները տվյալ ուսումնական հաստատության պայմաններում: Ուսուցիչը չի կարող պատրաստի բանաձևեր օգտագործելով լուծել մոտիվացիայի բարձրացման խնդիրը, և հետևաբար չենք կարող պարզեցնել մոտիվացիայի ձևավորման ուղիներ որոնման գործընթացը: Մոտիվացիայի ձևավորումն առաջին հերթին ուսուցման ներքին դրդապատճառների դրսևորման պայմանների ստեղծումն է և աշակերտների կողմից հետագա ինքնազարգացումը:

Այս տարիքային շեմում գտնվող աշակերտների զարգացման մեջ առաջատար դեր է խաղում հասակակիցների հետ շփումը: Օտար լեզու դասավանդելիս հաղորդակցական առաջադրանքների ճիշտ ընտրությունը՝ ուսումնական նյութի լավ մտածված լինելը թույլ է տալիս օպտիմալացնել հաղորդակցման գործընթացը, ինչպես նաև զարգացնել աշակերտի անհատականությունը:

Համարժեք մոտիվացիա ստեղծելու համար օգտագործվում են տարբեր մեթոդներ և հնարներ, սակայն այսօր առաջատար դեր է խաղում ուսուցողական խաղը: Բոլոր երեխաները սիրում են ստեղծագործել, մրցել և խաղալ:

Այսպիսով, ամփոփելով կատարված աշխատանքը, հարկավոր է նշել, որ օտար լեզու սովորելու ճանաչողական մոտիվացիայի ձևավորման մեջ մեծ դեր ունեն դասավանդման ակտիվ մեթոդները՝ խնդրահարույց, հետազոտական, խաղային հնարներն ու առաջադրանքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Taylor, W. (2012). Studying & Understanding Motivation [PDF document]. Retrieved from Lecture Notes Online Web site: www.westpoint.edu/cfe.
2. Motivating the students | TeachingEnglish | British Council | BBC
3. Karmen Pizorn(2013). University of Ljubljana. Young Foreign Language Learners' Motivation. Anderman, EM and Anderman, LH (2013) Classroom Motivation. Pearson.
4. Raffini, JP (1995) 150 Ways to Increase Intrinsic Motivation in the Classroom. Pearson.
5. Blackburn, BR (2005) Classroom Motivation from A to Z: How to engage your students in learning. Routledge.
6. Зайцева М.В.Мотивация и некоторые пути её повышения. М., ИД «Первое сентября», 2003

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1. Քեզ դու՞ր են գալիս անգլերենի դասերը:

   ա/ այո բ/ ոչ

2. Անգլերենի դասերը քեզ համար հետաքրքի՞ր են անցնում, թե ձանձրալի:

   ա/ հետաքրքիր բ/ ձանձրալի

3. Ամենից շատ ի՞նչին ես սպասու և սիրով անում դասերին:

   _____

4. Ո՞ր անգլերենի դասը հավանեցիր

   ա/ առանց խաղ բ/ խաղով

5. Դասի ո՞ր մասը կցանկանայիր, որ նորից կրկնվի հաջորդ դասերին:

   _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Sam is drinking tea in the kitchen now
A Special Train
Who
Is
Drinking
Tea
In the Kitchen
Now
?

ՀԱՐԿԱՎՈՐ Է ՀԱՐԳԵԼ ԳԻՐՔԸ,
ՀԱՐԿԱՎՈՐ Է ՀԱՐԳԱՆԵՔՈՎ
ՄՏԵԼ ՄՏՔԻ ԱՅԴ ՏԱՀԱՐԸ ...
I group
II group
to get up - got up
to have - had
to drink - drank


NOW
IS
What
I